

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 08.09.2021թ. թիվ 2113361594 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<<25>> 09 2021թ. 7-13 74539

ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Վահագն Այվազյանի ՄԴ/78513-21 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Չ Ե Ց Ի

Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Ազատության պողոտայի 7Բ շենքի 76 բնակարանի բնակիչ Վահագն Այվազյանը դիմումով խնդրել է բեկանել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 08.09.2021թ. թիվ 2113361594 որոշումը՝ նշելով, որ իր ոչ ճիշտ կայանելու պատճառը եղել է արհեստական խոչընդոտը :

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 08.09.2021թ. թիվ 2113361594 որոշումն ենթակա է կատարման հետևյալ պատճառաբանությամբ.

<<Տեսանկարահանող կամ լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած **տեսանյութն է կամ լուսանկարը**, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները:

<< կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը հաստատելու մասին>> 28.06.2007թ.թիվ 955-Ն որոշման 78-րդ կետի համաձայն՝ տրանսպորտային միջոցների կանգառը և կայանումը **թույլատրվում է ճանապարհի աջ մասում՝ մայթի մոտ կամ կողնակին, դրանց բացակայության դեպքում՝ երթևեկելի մասի եզրին:**

Նույն որոշման 25-րդ կետի համաձայն՝ **արգելվում է առավելություն ստանալու, ինչպես նաև կանգառն արգելված վայրերում կանգառ կատարելու (բացառությամբ հարկադրված կանգառի) նպատակով վթարային ազդանշանի օգտագործումը:**

Վարչական իրավախախտումների վերաբերյալ << օրենսգրքի 124-րդ հոդվածի 21-րդ մասի համաձայն՝ տրանսպորտային միջոցների վարորդների կողմից կանգառի և (կամ) կայանման կանոնները խախտելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով, տուգանային միավորի կիրառում՝ 0.5 միավոր:

Նույն օրենսգրքի 124-րդ հոդվածի 39-րդ մասի համաձայն՝ Սույն հոդվածի 21-րդ և 25-րդ մասերով (միայն կանգառ կատարելու մասով) նախատեսված վարչական իրավախախտումն ունի նվազ նշանակություն այն դեպքում, երբ կանգառը կատարվել է **միայն ուղևորների նստելու կամ իջնելու նպատակով, չի գերազանցել մեկ րոպե ժամանակահատվածը, և դրա հետևանքով երթևեկության մյուս մասնակիցների համար խոչընդոտ կամ վթարային իրադրություն առաջացնելու ակնհայտ վտանգ չի ստեղծվել:**



Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 08.09.2021թ. թիվ 2113361594 որոշման հիմքում դրված տեսանյութի դրվագային ուսումնասիրությունն ակնհայտ է դարձնում այն փաստը, որ դիմումատուին պատկանող տրանսպորտային միջոցը 20.08.2021թ. ժամը 13:42-ին Երևան քաղաքի Սայաթ-Նովա – Տերյան փողոցների խաչմերուկի հատվածում՝ կանգառ է կատարել Երթնեկելի մասի եզրից առնվազն մեկ տրանսպորտային միջոցի չափով հեռու ժամը՝ 13:41:40-րդ վայրկյանից 13:42:41-րդ վայրկյանը ներառյալ, որի տևողությունը կազմել է 61 վայրկյան, ուստի արարքը նվազ նշանակություն ունենալ չի կարող:

Այսպիսով դիմումատուի արարքում առկա են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 21-րդ մասի հատկանիշները, ուստի նրան վարչական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումն օրինական է և իրավաչափ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի

- 1.Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 08.09.2021թ. թիվ 2113361594 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման.
- 2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում.
- 3.Սույն որոշման օրինակն ուղարկել Վահագն Այվազյանին:



**Ե. Կարապետյան**

Կատարող՝ Ռ. Ավետիսյան  
Հեռ. 060-83-84-02